<< Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Արջուտի միջնակարգ դպրոց>>
ՊՈԱԿ

Республика Армения
Лорийский марз
<<Арчутская средняя школа>>
ГНКО

,,Arjut secondary school Lori Region
Republic of Armenia"

SNPO

(+374322) 6-86-40

գ.Արջուտ

N 09-1

§08 ¦ սեպտեմբեր 2022թ

ՀՀ ԿԳՄՍ նախարարության գլխավոր քարտուղար

Գագիկ Սաֆարյանին

«ՀՀ Լոռու մարզի Արջուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի

տնօրեն Գայանե Մեսրոբյանից

Հարգելի պարոն Սաֆարյան.

Համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 18.02.2021թ.-ի N22-Ն հրամանի 2-րդ կետի 12-րդ ենթակետի ներկայացնում եմ ուսուցչի թափուր տեղը համալրելու համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը:

Առդիր 1 էջ

Դպրոցի տնօրեն՝/ / Գ.Մեսրոբյան

Մրցույթ՝ ՀՀ Լոռու մարզի «Արջուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մայրենիի (8 դասաժամ), ֆիզիկայի (13 դասաժամ) ուսուցչի թափուր տեղ/երի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2022 թ.սեպտեմբերի 10-ից մինչև սեպտեմբերի 26-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2022թ.սեպտեմբերի 29-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Լոռու մարզի Արջուտի միջնակարգ դպրոցում, հասցե՝ Լոռու մարզ,գ.Արջուտ,1-ինփողոց,29/1շ.: Տեղեկությունների համար զանգահարել 0322 68640 հեռախոսահամարով: